1. Արսեն Պետրոսյան		_____	_____	10. Աղասի Բաղդասարյան		_____	_____
2. Նաիրա Բասենցյան		_____	_____	11. Սևակ Խաչատրյան		_____	_____
3. Գևորգ Ղազարյան		_____	_____	12. Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
4. Ներսես Մելիքյան		_____	_____	13. Նաիրա Գրիգորյան		_____	_____
5. Վարդան Գրիգորյան		_____	_____	14. Կարեն Գևորգյան		_____	_____
6. Կարեն Մովսիսյան		_____	_____	15. Նորայր Օհանյան		_____	_____
7. Գոհար Նիկողոսյան		_____	_____	16. Էմմա Պատուրյան		_____	_____
8. Հրայր Ավետիսյան		_____	_____	17. Էդգար Թամազյան		_____	_____
9. Աննա Կիրակոսյան		_____	_____	18. Արմեն Դավթյան		_____	_____
				19. Քրիստինե Հակոբյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄԱՆՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական եվ գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է օրենքի պահանջից, քանի որ.

1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ:

Տեղական տուրքերի և/կամ վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին, իսկ տեղական տուրքերի և/կամ վճարների արտոնություններ են տեղական տուրքի և/կամ վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և/կամ վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքը և/կամ վճարի վճարումից ազատումը:

Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է Վաղարշապատ համայնքի բյուջեից՝ երեխա-թվով:

2. Վաղարշապատ համայնքում երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում տեղական վճարների գծով արտոնություններ գործել են. հիմք ընդունելով այդ փաստը՝ Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման դեպքում բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

3. Ելնելով ներկա սոցիալ-տնտեսական վիճակից, նպատակ ունենալով աջակցելու և մեղմացնելու համայնքում սոցիալական լարվածությունը, ինչպես նաև խթանելու համայնքում արտադպրոցական կրթության կարևորությունը մշակութային և արվեստի ոլորտում՝ անհրաժեշտություն է առաջացել նոր ձևաչափով սահմանել 2024 թվականին Վաղարշապատ համայնքի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում ծառայությունից օգտվողների համար տեղական վճարի գծով արտոնություններ:

4. Սույն որոշմամբ սահմանվում են նաև այն փաստաթղթերը, որոնց ներկայացումն անհրաժեշտ է տեղական վճարների գծով արտոնություն սահմանելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԽՈՂ.

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ

Ա. ՂԵՏՐՈՍՅԱՆ



ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	23.01.2024թ. Nº/27.1/2560-2024 գրության
1.«Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ 2) վերնագրում «Վաղարշապատի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «Արմավիրի մարզի» բառերը:	Ընդունվել է
Նախագծի 2-ի նախաբանում անհրաժեշտ է հանել «և 57-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերը, իսկ «Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ ընդունված կարգով, նպատակ ունենալով մեղմացնել սոցիալական լարվածությունը, խթանելու համայնքում նախադպրոցական կրթությունն ու այն հասանելի դարձնել տարբեր սոցիալական խմբերի պատկանող անձանց և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ» բառերով:	Ընդունվել է մասնակի. Նորմատիվ իրավական ակտից հանվել է «և 57-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերը: Մնացած մասով գտնում ենք, որ դիտողությունը չունի իրավական հիմնավորում: <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի): Նախաբանով չեն սահմանվում նորմատիվ դրույթներ: Տվյալ պարագայում նորմատիվ ակտում նշված «Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ ընդունված կարգով, նպատակ ունենալով մեղմացնել սոցիալական լարվածությունը, խթանելու համայնքում նախադպրոցական կրթությունն ու այն հասանելի դարձնել տարբեր սոցիալական խմբերի պատկանող անձանց և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը» բառերը համդիսանում են նորմատիվ իրավական ակտի նախաբան, իսկ փորձաքննությամբ առաջարկված դրանց փոխարինումը «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ» բառերով դարձնում է նախաբանը անհասկանալի և իմաստ չարտահայտող:
3. Նախագիծ 2-ի 1-ին կետի 3-րդ ենթակետում «դպրոց» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «երաժշտական և գեղարվեստի» բառերը:	Ընդունվել է

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին

12 հունվար 2024թ.

Ժամը 12:00-ին

2024 թվականի հունվարի 12-ին «ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթ

Լ. ՀԱԿՈՔՅԱՆ Բացման խոսքով և զեկույցով հանդես եկավ Վաղարշապատի համայնքապետարանի Կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Տիկին Հակոբյանը հանրային քննարկման մասնակիցներին ներկայացրեց, որ «Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է օրենքի պահանջից, քանի որ.

1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և/կամ վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին, իսկ տեղական տուրքերի և/կամ վճարների արտոնություններ են տեղական տուրքի և/կամ վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և/կամ վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքը և/կամ վճարի վճարումից ազատումը:

Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը իրականացվում է Վաղարշապատ համայնքի բյուջեից՝ երեխա-թվով:

2. Վաղարշապատ համայնքում նախադպրոցական կրթության ոլորտում տեղական վճարների գծով արտոնություններ գործել են. հիմք ընդունելով այդ փաստը՝ Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման դեպքում բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

3. Ելնելով ներկա սոցիալ-տնտեսական վիճակից, նպատակ ունենալով աջակցելու և մեղմացնելու համայնքում սոցիալական լարվածությունը, ինչպես նաև խթանելու համայնքում նախադպրոցական կրթության կարևորությունը և այն հասանելի դարձնելու համար տարբեր սոցիալական խմբերի անձանց՝ անհրաժեշտություն է առաջացել նոր ձևաչափով սահմանել 2024 թվականին Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայությունից օգտվողների համար տեղական վճարների գծով արտոնություններ:

4. Սույն որոշմամբ սահմանվում են նաև այն փաստաթղթերը, որոնց ներկայացումն անհրաժեշտ է տեղական վճարների գծով արտոնություն սահմանելու համար:

Հիմնավորումները ներկայացնմելուց հետո, Լ.Հակոբյանը ներկայացրեց ավագանու որոշման նախագիծը, ըստ որի՝

1. Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում սահմանված տեղական վճարի գծով սահմանել հետևյալ արտոնությունները.

1) Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց երեխաների համար՝ սահմանված տեղական վճարի գծով 100%-ի չափով, իսկ ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց երեխաների համար՝ սահմանված տեղական վճարի գծով 50%-ի չափով:

2) Երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանված տեղական վճարի գծով 100%-ի չափով, իսկ միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ սահմանված տեղական վճարի 50%-ի չափով:

3) Ընտանեկան նպաստ ստացող համակարգում հաշվառված ընտանիքների, նույն ընտանիքից միևնույն ժամանակ դպրոց ՀՈԱԿ-ներ այցելող 3-րդ ու 4-րդ երեխաների համար սահմանված տեղական վճարի 50%-ի չափով, իսկ նույն ընտանիքից միևնույն ժամանակ դպրոց ՀՈԱԿ-ներ այցելող 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխաների համար 100%-ի չափով:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը.

1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում՝ երեխայի օրինական ներկայացուցչի կամ ծնողի դիմումը, որին կցվում են դիմումատուի անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողի մահվան վկայականի պատճենը և տեղեկանք ՀՀ պաշտպանության նախարարությունից:

2) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նշված դեպքերում՝ երեխայի օրինական ներկայացուցչի կամ ծնողի դիմումը, որին կցվում են դիմումատուի անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականի պատճենը, երեխայի ծնողների կամ ծնողի մահվան վկայականների պատճենները:

3) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով նշված դեպքերում՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են դիմումատուի անձնագրի պատճենը, երեխայի ծննդյան վկայականների պատճենները, տեղեկանք համապատասխան հաստատությունից, տեղեկանք ընտանեկան նպաստ ստանալու համակարգում հաշվառված լինելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Հարց ու պատասխանի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

Որոշում

Ամփոփելով հանրային քննարկումը՝ մասնակիցները հավանության արժանացրին «Հայաստանի Հանրապետության Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագիծը. որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Ձեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարանի
Քննարկման վարող՝
Արձանագրող՝

Ա. Պետրոսյան
Լ. Հակոբյան
Մ. Պողոսյան



Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով:

ՑԱՆԿ

ՎԱՐԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍԻ ԴՊՐՈՅ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՐՏՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՊԵՇՏ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿՆ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐԱՅՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԱԿԻՅՆԵՐԻ

	անուն/ազգանուն	Էլ.իասցե	հեռախոսահամար	ստորագրություն
1.	Վարդանիս Գևորգյան		093 60 88 45	
2.	Վահագնյան Զարգար	chigombar@gmail.com	094403626	
3.	Վահանյան Զարուհի	zaramanasgar.logmail.com	094990839	
4.	Պապիկյան Ժամբակ		098 65 38 55	
5.	Պետկեզյան Մարգարիտ	Vardaki.Tigranaki@inbox.ru	077467269	
6.	Պրիցաև Լիա	goramkretskaya83@gmail.ru	07793539	
7.	Պրոկորով Զարգար	rumelgani1991@gmail.ru	077099977	
8.	Պրոկորով Զարգար	tamara-katkegova@com	093520 640	
9.	Ջուրսև Զեյնա	lusi-exham@mail.e-rus	093551344	
10.	Սեփիև Կարպատյան	sephisevianov@gmail.com	091-1655 50	
11.	Սարգսի Խաչիկ	zazgar@ramail.ru	077-88-79-42	
12.	Մկրտչյան Ալի	an.petrasyan@mail.ru	033 3365 12	
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Լ

«13» փետրվարի 2024թ.

ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 107-Լ ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ
ԹԻՎ 2-Ի ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.01.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և 64-րդ հոդվածի 2-րդ մասով,
«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով և
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 37-րդ
հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի
առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Վաղարշապատի
համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2024 թվականի կառուցվածքը,
աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ
107-Լ որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումները և
փոփոխությունները՝

- 1) Աշխտակիցների քանակը կետում «99» փոփոխել «105»-ի:
- 2) «Քաղաքաշինության և հողաշինության բաժին» մասի «Գլխավոր մասնագետ» հատվածում
սահմանված միավոր «3» փոփոխել «5»-ի, «711000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «1185000»-ի:
- 3) «Քաղաքաշինության և հողաշինության բաժին» մասի «Առաջատար մասնագետ» հատվածում
սահմանված միավոր «3» փոփոխել «5»-ի, «540000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «900000»-ի:
- 4) Հանել «Քաղաքաշինության և հողաշինության բաժին» մասի «1-ին կարգի մասնագետ» հաստիքը, 2
միավորով «166 000» դրույքաչափով, «332 000» աշխատավարձի ֆոնդով:
- 5) «Քաղաքաշինության և հողաշինության բաժին» մասի ընդամենը տողում սահմանված՝ «10»
միավորը փոփոխել «12»-ի, ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «2,219,000» թիվը փոփոխել «2,721,000»-ի:
- 6) «Ֆինանսատնտեսագիտական բաժին» մասում կատարել լրացում՝ ավելացնել «Գլխավոր
մասնագետ» հաստիքը 2 միավորով «237 000» դրույքաչափով, «474 000» աշխատավարձի ֆոնդով:
- 7) «Ֆինանսատնտեսագիտական բաժին» մասի «1-ին կարգի մասնագետ» հատվածում սահմանված՝
միավոր «4» փոփոխել «2»-ի, «664000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «332000»-ի:
- 8) «Ֆինանսատնտեսագիտական բաժին» մասի ընդամենը տողում սահմանված՝ «ընդամենը»
աշխատավարձի ֆոնդ «1,660,000» թիվը փոփոխել «1,802,000»-ի:
- 9) «Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին» մասում կատարել լրացում՝ ավելացնել
«Գլխավոր մասնագետ» հաստիքը 1 միավորով «237 000» դրույքաչափով, «237 000» աշխատավարձի
ֆոնդով:

10) «Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին» մասի ընդամենը տողում սահմանված՝ «12» միավորը փոփոխել՝ «13»-ի, ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «2,310,000» թիվը փոփոխել «2,527,000»-ի:

11) «Կրթության և մշակույթի բաժին» մասի «1-ին կարգի մասնագետ» հատվածում սահմանված՝ միավոր «2» փոփոխել «3»-ի, «332000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «498000»-ի:

12) «Կրթության և մշակույթի բաժին» մասի ընդամենը տողում սահմանված՝ «7» միավորը փոփոխել՝ «8»-ի, ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «1,414,000» թիվը փոփոխել «1,580,000»-ի:

13) «Քարտուղարության բաժին» մասի «Առաջատար մասնագետ» հատվածում սահմանված՝ միավոր «1» փոփոխել «3»-ի, «180000» աշխատավարձի ֆոնդը փոփոխել «720000»-ի:

14) «Քարտուղարության բաժին» մասի «2-րդ կարգի մասնագետ» բաժնից հետո լրացնել «(Ոսկեհաս ընկերություն)» բաժնի:





15) «Քարտուղարության բաժին» մասի ընդամենը տողում սահմանված՝ «7» միավորը փոփոխել՝ «9»-ի, ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «1,343,000» թիվը փոփոխել «1,883,000»-ի:

16) Ընդհանուր հավելվածի ընդամենը տողում սահմանված՝ «99» միավորը փոփոխել՝ «105»-ի, ընդամենը՝ աշխատավարձի ֆոնդ «19,784,149» թիվը փոփոխել «21,371,149»-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ավագանու 16.01.2024 թվականի «Հայաստանի Հանրապետության արմավիրի մարզի վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 107-Ն որոշմամբ հաստատված հավելված թիվ 2-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 4-Ն որոշումը:

3. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտը հաստատելու պահից:

4. Սույն որոշման 2-րդ կետը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	ՀՀ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Արսեն Պետրոսյան		_____	_____	10. Աղասի Բաղդասարյան		_____	_____
2. Նաիրա Բասենցյան		_____	_____	11. Սևակ Խաչատրյան		_____	_____
3. Գևորգ Ղազարյան		_____	_____	12. Վահրամ Ղարիբջանյան		_____	_____
4. Ներսես Մելիքյան		_____	_____	13. Նաիրա Գրիգորյան		_____	_____
5. Վարդան Գրիգորյան		_____	_____	14. Կարեն Գևորգյան		_____	_____
6. Կարեն Սուվիսյան		_____	_____	15. Նորայր Օհանյան		_____	_____
7. Գոհար Նիկողոսյան		_____	_____	16. Էմմա Պատուրյան		_____	_____
8. Հրայր Ավետիսյան		_____	_____	17. Էդգար Թամազյան		_____	_____
9. Աննա Կիրակոսյան		_____	_____	18. Արմեն Դավթյան		_____	_____
				19. Քրիստինե Հակոբյան		_____	_____

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա ՂԵՏՐՈՍՅԱՆ

2024 թվականի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի
աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 105

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքը	Միավոր	Դրույքաչափ	Աշխատավարձի ֆոնդ
Քաղաքական և հայեցողական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	550000	550000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	412000	412000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	412000	412000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	2	345000	690000
5	Համայնքի ղեկավարի օգնական	2	320000	640000
6	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	305000	305000
Ընդամենը		8		3,009,000
Համայնքային վարչական պաշտոններ				
1	Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար	1	345000	345000
Ընդամենը		1		345,000
Համայնքային ծառայության պաշտոններ				
Աշխատակազմ				
1	Աշխատակազմի քարտուղար	1	412000	412000
2	Գլխավոր մասնագետ	2	237000	474000
3	Գլխավոր մասնագետ-տնտեսական ծրագրերի պատասխանատու	1	237000	237000
4	Առաջատար մասնագետ	2	180000	360000
Ընդամենը		6		1,483,000
Քաղաքաշինության և հողաշինության բաժին				
1	Բաժնի պետ	1	345000	345000
2	Բաժնի պետի տեղակալ	1	291000	291000
3	Գլխավոր մասնագետ	5	237000	1185000
4	Առաջատար մասնագետ	5	180000	900000
Ընդամենը		12		2,721,000
Ֆինանսատնտեսագիտական բաժին				
1	Բաժնի պետ	1	345000	345000
2	Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ	1	291000	291000
3	Գլխավոր մասնագետ	2	237000	474000
4	Առաջատար մասնագետ	2	180000	360000
5	1-ին կարգի մասնագետ	2	166000	332000
Ընդամենը		8		1,802,000
Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
1	Բաժնի պետ	1	345000	345000
2	Բաժնի պետի տեղակալ	1	291000	291000
3	Գլխավոր մասնագետ	1	237000	237000
4	Առաջատար մասնագետ	1	180000	180000
5	1-ին կարգի մասնագետ	9	166000	1494000
Ընդամենը		13		2,547,000
Իրավաբանական բաժին				
1	Բաժնի պետ	1	345000	345000
2	Բաժնի պետի տեղակալ	1	291000	291000

3	Գլխավոր մասնագետ(պատվիրակված լիազորություններ իրականացնող)	1	186583	186583
4	Գլխավոր մասնագետ	1	237000	237000
5	Առաջատար մասնագետ (պատվիրակված լիազորություններ իրականացնող)	2	156583	313166
6	Առաջատար մասնագետ	2	180000	360000
7	1-ին կարգի մասնագետ	2	166000	332000
Ընդամենը		10		2,064,749
Կրթության և մշակույթի բաժին				
1	Բաժնի պետ	1	345000	345000
2	Գլխավոր մասնագետ	1	237000	237000
3	Առաջատար մասնագետ	2	180000	360000
4	1-ին կարգի մասնագետ	3	166000	498000
5	2-րդ կարգի մասնագետ	1	140000	140000
Ընդամենը		8		1,580,000
Քարտուղարության բաժին				
1	Բաժնի պետ	1	345000	345000
2	Առաջատար մասնագետ (Ոսկեհատ բնակավայրի օպերատոր)	1	180000	180000
3	Առաջատար մասնագետ	3	180000	720000
4	1-ին կարգի մասնագետ	3	166000	498000
5	2-րդ կարգի մասնագետ (Ոսկեհատ բնակավայր)	1	140000	140000
Ընդամենը		9		1,883,000
Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ				
1	Տեխնիկական սպասարկման պատասխանատու	1	345000	345000
2	Տնտեսվար	1	160000	160000
3	Փորձագետ	1	166000	166000
4	Փորձագետ	1	140000	140000
5	Գործավար	4	140000	560000
6	Օպերատոր-նկարահանող մասնագետ	1	166000	166000
7	Օպերատոր- մոնտաժի մասնագետ	1	140000	140000
8	Վարորդ	1	120000	120000
9	Սանտեխնիկ-հյուսն	1	160000	160000
10	Էլեկտրիկ	1	160000	160000
11	Անվտանգության իսկիչ	3	125000	375000
12	Բանվոր-ներկարար	1	156000	156000
13	Հյուսն	1	95700	95700
14	Բանվոր	1	140000	140000
15	Հավաքարար	9	95700	861300
16	Պահակ	2	95700	191400
Ընդամենը		30		3,936,400
Ընդամենը		105		21,371,149

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարի գումարը փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափով նախատեսվում է հավելավճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 107-Լ որոշմամբ հաստատված թիվ 2-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնում.

ՀՀ օրենսդրության և քաղաքաշինական նորմերի պահանջներն առավել արդյունավետ կատարելու, քաղաքի ճարտարապետական տեսքն արդիականացնելու, ապօրինի շինարարությունները կանխելու և դրանց հետևանքները վերացնելու, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնում առկա առաջադրանքների և դիմումների մեծ քանակությամբ պայմանավորված ծանրաբեռնվածությունը թոթափելու և աշխատանքները կատարելու մեջ ավելի որակյալ և փորձառու մասնագետներ ներգրավելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով ոլորտային տարբերակումը՝ քաղաքաշինական և համայնքի հողաշինական ոլորտներ, առաջացել է անհրաժեշտություն քաղաքաշինության և հողաշինության բաժնում ավելացնել նոր պաշտոններ՝ ևս երկու գլխավոր մասնագետի և 2 առաջատար մասնագետների:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հիշյալ բաժնում թափուր երկու միավոր 1-ին կարգի մասնագետների պաշտոններն, առաջարկում ենք /պաշտոնի անձնագրի ծածկագեր 3.2-1, 3.2-2/ կրճատել նշված պաշտոնները:

2. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնում.

բաժնին վերապահված է համայնքի՝ աշխատակազմի, ՀՈԱԿ-ների, բյուջետային հիմնարկների գնումների կազմակերպումն ու վերահսկումը:

Ինչպես նաև աշխատանքների ծավալի մեծացումով պայմանավորված, ավելի որակյալ (որակավորված) մասնագետների բաժնի աշխատանքներին ներգրավելու համար առաջացել է անհրաժեշտություն ավելացնել թվով 2/երկու/ գլխավոր մասնագետի հաստիք:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հիշյալ բաժնում թափուր երկու միավոր 1-ին կարգի մասնագետների պաշտոններն, առաջարկում ենք /պաշտոնի անձնագրի ծածկագեր 3.2-5, 3.2-7/ կրճատել նշված պաշտոնները:

3. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնում.

Ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի և փոխադրամիջոցների համար սահմանված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի գանձումը և անշարժ գույքի հարկ ու փոխադրամիջոցի հարկ վճարողների հաշվառումը, ինչպես նաև սպասարկումը, համայնքի վարչական սահմաններում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց օրենքով սահմանված թույլտվություն պահանջող գործունեությունների իրականացման համար համապատասխան թույլտվությունների տրամադրման, հարկային պարտավորություններ ունեցող անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ փաստաթղթեր նախապատրաստելու և հավաքագրելու, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար օրենքով և ավագանու կողմից սահմանված արտոնությունների վերաբերյալ փաստաթղթերը ուսումնասիրելու, ինչպես նաև համայնքի սեփականությունը հանդիսացող, վարձակալական հիմունքներով տրամադրված գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալների ծանուցումների կազմման և վարձավճարների գանձումների հետ կապված աշխատանքներն առավել արդյունավետ կատարելու, ինչպես նաև ծանրաբեռնվածությունը թոթափելու և աշխատանքները կատարելու մեջ ավելի որակյալ և փորձառու մասնագետներ ներգրավելու նպատակով, առաջացել է անհրաժեշտություն ավելացնել գլխավոր մասնագետի հաստիք:

4. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնում.

համակարգչային աշխատանքների ընդլայման հետ կապված անհրաժեշտություն է առաջացել ավելացնել 1-ին կարգի մասնագետի հաստիքային միավոր, ինչը հնարավորություն կտա համայնքային

կառավարման տեղեկատվական համակարգին միացած ՀՈԱԿ-ների հետ կազմակերպել ցանցային ճիշտ ու արդյունավետ աշխատանք: Դրանով մասնագետը կկարողանա վերահսկողություն իրականացնել համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների, գրադարանների, թանգարանների և մշակույթի տան գործունեության նկատմամբ, աջակցել ՀՈԱԿ-ներին կադրային և անձնական գործերի փաստաթղթաշրջանառության վարման ընթացքում արագ ու դասակարգված: Հայտնում ենք նաև, որ հաստիքային միավորով համալրման դեպքում բաժնի աշխատանքները կվերադասավորվեն և կդիտարկվի 2-րդ կարգի մասնագետի կրճատման հնարավորությունը:

5. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնում.

արխիվացման նորմերի պահանջներն առավել արդյունավետ կատարելու, արխիվացման աշխատանքների կատարման մեջ ավելի որակյալ և փորձառու մասնագետներ ներգրավելու նպատակով, հիմք ընդունելով Վաղարշապատի համայնքապետարանի և ենթակա կառույցների ներքին և արտաքին գործունեության հետ կապված իրավական և ոչ իրավական բնույթ ունեցող փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով պահպանելու, դրանց հաշվառման, օգտագործման և արխիվացման անհրաժեշտությունն ու մեծ ծավալը և այն, որ համայնքապետարանում առկա չէ արխիվացում իրականացնող առանձին մասնագետներ, միաժամանակ հաշվի առնելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագիրը, առ այն, որ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում աշխատանքները իրականացվում են քարտուղարության բաժնի մեկ աշխատակցի կողմից, որը կատարում է դիմումների մուտքագրում, դիմումների և գրությունների պատասխանների նախապատրաստում, տեղեկատվության տրամադրում, տրամադրում է ընտանիքի կազմի վերաբերյալ տեղեկանքներ, բնակավայրից տեղեկանքներ, անշարժ գույքի և փոխադրամիջոցի հարկի վերաբերյալ տեղեկություններ, ժառանգությունը ճանաչելու նպատակով տրամադրում է մինչև մահը և մահից հետո տիրապետման վերաբերյալ տեղեկանքներ, ինչպես նաև Կադաստրի կոմիտե մուտքագրում է էլեկտրոնային հասցեների քաղվածքներ, բնակչության համար տպում է իրավիճակային քարտեզներ, նախապատրաստում է պատասխաններ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության գրությունների մասով և ապահովում է բնակչության ծանուցումը, քարտուղարության բաժնում առկա առաջադրանքների և դիմումների մեծ քանակությամբ պայմանավորված ծանրաբեռնվածությունը թողափելու և աշխատանքները կատարելու մեջ ավելի որակյալ և փորձառու մասնագետներ ներգրավելու նպատակով առաջացել է անհրաժեշտություն քարտուղարության բաժնում ավելացնել ևս 2 /երկու/ առաջատար մասնագետների պաշտոններ, իսկ բաժնի գործող 2-րդ կարգի մասնագետին ներգրավել Ոսկեհատ բնակավայրի աշխատանքներին:

Վերը նշված հաստիքների համար կնախատեսվեն նոր գործառույթներ, իրավունք-պարտականություններ և կներկայացվեն աշխատանքի կատարման նկատմամբ առավել պատասխանատվություն՝ ինչը կնախատեսվի նաև նոր պաշտոնների անձնագրերի նախագծերում /կից ներկայացվում են/:

Ներկայացված պաշտոնները սահմանվել են՝ ելնելով համայնքում կատարվելիք աշխատանքների ծավալից, առանձնահատկություններից և տեսակից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա ՂԵՏԴՈՍՅԱՆ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Լ

«13» փետրվարի 2024թ.

ք.Էջմիածին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԹԻՎ 47 ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 2-Ի
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և 64-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109 հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի «Վաղարշապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի կանոնադրությունը հաստատելու և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և կազմը հաստատելու մասին» թիվ 47 որոշմամբ հաստատված հավելված 2-ի մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) լրացնել՝ «Էդգար Թամազյան /ավագանու անդամ/ բառերը:

2) լրացնել՝ «Լիլիթ Հակոբյան /կրթության և մշակույթի բաժնի պետ/ բառերը:

3) «Սևակ Խաչատրյան /ավագանու անդամ/» բառերի փոխարեն կարդալ «Նարինե Ասատրյան ՀՀ ԱՍՀ նախարարության միասնական սոցիալական ծառայության Վաղարշապատի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ» բառերով:

4) «Տաթևիկ Սիրեկանյան» բառերի փոխարեն կարդալ «Անի Յափունջյան»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Հ/ՀԱզգանուն Անուն</u>	<u>Կոդ</u>	<u>Պեմ</u>	<u>Ձեռնպահ</u>	<u>Հ/ՀԱզգանուն Անուն</u>	<u>Կոդ</u>	<u>Պեմ</u>	<u>Ձեռնպահ</u>
1. Արսեն Պետրոսյան				10. Ադասի Բաղդասարյան			
2. Նաիրա Բասենցյան				11. Սևակ Խաչատրյան			
3. Գևորգ Ղազարյան				12. Վահրամ Ղարիբջանյան			
4. Ներսես Մելիքյան				13. Նաիրա Գրիգորյան			

5. Վարդան Գրիգորյան




6. Կարեն Մովսիսյան



7. Գոհար Նիկողոսյան



8. Հրայր Ավետիսյան



9. Աննա Կիրակոսյան



14. Կարեն Գևորգյան



15. Նորայր Օհանյան



16. Էմմա Պատուրյան



17. Էդգար Թամազյան



18. Արմեն Դավթյան



19. Քրիստինե Հակոբյան



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

«07» փետրվարի 2024թ.

N 192

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՈՐՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Ի պատասխան Ձեր 01.02.2024թ. թիվ 459 գրության Ձեզ եմ ներկայացնում Վաղարշապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար Միասնական սոցիալական ծառայության Վաղարշապատի տարածքային կենտրոնի Սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ՝ Նարինե Վարազդատի Ասատրյանի թեկնածությունը (հեռախոս՝ 093414008, էլ.փոստ՝ narine.asatryan@socservice.am):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ն. ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ ՄՍԾ Վաղարշապատի ՏԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Մբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663
Էլ. փոստ: info@ejmiatsin.am



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ГОРОДА ВАГАРШАПАТ
РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663
Эл.почта: info@ejmiatsin.am

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
Address: 0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663, E-mail: info@ejmiatsin.am

№ 459

01 փետրվարի 2021 թ.

ՀՀ ԱՍՀ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՆԱՐԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ասատրյան,

Համաձայն ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի 631-Ն որոշման 14-րդ կետի Վաղարշապատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում անհրաժեշտ է ընդգրկել ՄՍԾ սոցիալական աշխատանքի մասնագետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք առաջարկել համապատասխան մասնագետ, տրամադրելով վերջինիս տվյալները /անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոնը, հեռախոսահամար և էլ. փոստ/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բաժնի պետ

Կ. Եսայան

Կատ.

Վ.Անդրեասյան



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ա

«13» փետրվարի 2024թ.

ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով, որ Վաղարշապատ համայնքի մեջ Ոսկեհատ բնակավայրի ներգրավման պատճառով ավելացել են բարեկարգման աշխատանքների ծավալները, նշված աշխատանքները ժամանակին և պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել բեռնատար ավտոաշտարակ, հիմք ընդունելով վերոգրյալը և համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեի ֆոնդային մասում նախատեսված միջոցներից՝ մեկ անձից զնման եղանակով, շուկայական գնով ձեռք բերել նախկինում շահագործված, 2004 թվականի թողարկման ZIL մակնիշի բեռնատար ավտոաշտարակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/ՀԱզգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/ՀԱզգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Արսեն Պետրոսյան				10. Աղասի Բաղդասարյան			
2. Նաիրա Բասենցյան				11. Սևակ Խաչատրյան			
3. Գևորգ Ղազարյան				12. Վահրամ Ղարիբջանյան			
4. Ներսես Մելիքյան				13. Նաիրա Գրիգորյան			
5. Վարդան Գրիգորյան				14. Կարեն Գևորգյան			
6. Կարեն Մովսիսյան				15. Նորայր Օհանյան			
7. Գոհար Նիկողոսյան				16. Էմմա Պատուրյան			
8. Հրայր Ավետիսյան				17. Էդգար Թամազյան			
9. Աննա Կիրակոսյան				18. Արմեն Բաղդասարյան			
				19. Բրիտանիկ Հակոբյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ»



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
“ДИРЕКЦИЯ
БАРЕКАРГУМ”
МЭРИИ ГОРОДА
ВАГАРШАПАТ

ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663 - 112

РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Масхтоца 0
Тел.: +374 (231) 53663 - 112

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, “BAREKARGUM DIRECTORATE” OF THE
MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663 - 112

№ 10

« 31 » 01 2024 թ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝
ՊԱՐՈՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հայտնում եմ Ձեզ, որ Վաղարշապատ համայնքում և Ոսկեհատ վարչական
շրջանում բարեկարգման աշխատանքների ծավալների մեծացման հետ կապված,
ժամանակին և պատշաճ կազմակերպելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել
«Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի համար գնման կարգով ձեռք բերել ամբարձիչ,
քանի որ մեր հաշվեկշռում գտնվող երկու ամբարձիչներից մեկը /1981թ. թողարկում/
քառասուներկու տարի շարունակ վերանորոգվում և շահագործվում է:

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը:

ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՆԱՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

«13» փետրվարի 2024թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետով և 22-րդ կետով ու և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող (հիմք՝ ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23012024-04-00767, տրված 23.01.2024թ.) ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս, թիվ 32/1 հասցեում գտնվող 0.061 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 04-002-0874-0134) բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

2. Յուրաքանչյուր քառակուսի մետր (քմ) հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 100% չափով:

3. Հողամասի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:

4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի «Աճուրդային հանձնաժողով» -ի միջոցով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/ՀԱզգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/ՀԱզգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Արսեն Պետրոսյան				10. Աղասի Բաղդասարյան			
2. Նաիրա Բառնեցյան				11. Սևակ Խաչատրյան			
3. Գևորգ Ղազարյան				12. Վահրամ Ղարիբջանյան			
